Անկախ կյանքի կենտրոն

հաշմանդամների համար

Անկախ կյանքի շարժման պատմությունից

Հաշմանդամների անկախ կյանքի գաղափարը ծագել է 1960-ական թվականներին Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Գաղափարի նախահայրն է էդ Ռոբերտսը (1939-1995): Նա ծանր հաշմանդամության արդյունքում անընդհատ բախվում էր խտրականության տարբեր դրսևորումների, ինչը դրդեց նրան պայքարելու հաշմանդամների և ոչ-հաշմանդամների իրավահավասարության համար: Նրա ծավալած գործունեության արդյունքում ձևավորվեց մի ամբողջ շարժում, որը նպատակ ուներ «ազատագրել» հաշմանդամներին՝ դուրս բերել նրանց կախյալ վիճակից և դարձնել հնարավորինս ինքնուրույն, անկախ կյանք վարելու ունակ: Գաղափարի շուրջ աստիճանաբար համախմբվեցին հազարավոր հաշմանդամներ: 1972 թվականին Կալիֆորնիայում հիմնադրվեց անկախ կյանքի առաջին կենտրոնը: Այնուհետև անկախ կյանքի գաղափարը տարածվեց աշխարհով մեկ և բազմաթիվ նմանատիպ կենտրոններ ստեղծվեցին տարբեր երկրներում:

«Ունիսոն» հասարակական կազմակերպությունը Հայաստանում առաջինն է, որ ստեղծեց հաշմանդամների անկախ կյանքի կենտրոն՝ դառնալով գաղափարի կրողը և տարածողը մեր երկրում:

Մարդու իրավունքների և շահերի պաշտպանության բաժին

Բաժինը նպատակ է հետապնդում նպաստել հաշմանդամների իրավական գրագիտության և նրանց իրավական պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը: Բաժինը հաշմանդամներին շաբաթական երկու անգամ

անվճար տրամադրում է իրավական խորհրդատվություն և այլ անհրաժեշտ տեղեկատվություն: Հաշմանդամներն իրենց հանդեպ խտրականության դրսևորման և նրանց իրավունքների ոտնահարման դեպքերում կարող են դիմել բաժնի պատասխանատուներին, որոնք կներկայացնեն հաշմանդամների շահերը դատական, պետական և այլ ատյաններում կամ կձեռնարկեն անհրաժեշտ այլ միջոցներ: Բաժինը վերլուծելու և ամփոփելու է հաշմանդամության հիմքով խտրականության, հաշմանդամների իրավունքների և օրինական շահերի խախտման դեպքերը, անհրաժեշտության դեպքում մշակելու է օրենսդրական բարեփոխումների առաջարկություններ:

Տեղեկատվական բաժին

Բաժինը տրամադրում է հաշմանդամների հիմնախնդիրների հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն, մասնավորապես.

- համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հասցեներ, ոլորտի համար պատասխանատու պաշտոնատար անձանց անուններ և կոնտակտներ
- բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների հասցեներ, պաշտոնատար անձանց անուններ և կոնտակտներ
- բժշկական և վերականգնողական հաստատությունների հասցեներ և հեռախոսահամարներ, պետական պատվերի շրջանակներում բուժման հնարավորություններ
- աջակցող սարքավորումներ (սայլակներ, լսողական սարքեր և այլն) տրամադրող կազմակերպությունների հասցեներ և հեռախոսահամարներ
- կրթություն ստանալու և վերապատրաստում անցնելու հնարավորություններ
- մշակութային և սպորտային կյանքին ներգրավվելու հնարավորություններ
- իրավապաշտպան և հաշմանդամության հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների հասցեներ, ղեկավարների անուններ և կոնտակտներ:

Անկախ կյանքի հմտությունների բաժին

Ուսուցումը անցկացվում է կենտրոնում, իսկ առանձին դեպքերում հաշմանդամի տանը՝ խորհրդատուների հետ հանդիպումների միջոցով:

Անկախ կյանքի հմտությունների ուսուցումը (թրենինգը) կօգնի անձանց, որոնք նոր են հաշմանդամ դարձել, տիրապետել ինքնուրույն ապրելակերպի միջոցների, ինչպես օրինակ՝ հագնվել, տեղափոխվել սայլակից մահճակալ, հմտորեն տիրապետել սայլակին և այլն:

Թրենինգների ընթացքում մասնակիցները կդառնան առավել տեղեկացված հաշմանդամության բժշկական, սոցիալական և հոգեբանական գործոնների վերաբերյալ, և նրանց մոտ կձևավորվի լիարժեք ինքնաընկալում:

Բաժնի հիմնական գործունեությունը ծավալվում է հետևյալ հիմնահարցերի շուրջ՝ աջակցող սարքերի օգտագործում, խնամք և ինքնախնամք, հաղորդակցվելու հմտություններ, առողջական վիճակ, տնային տնտեսության վարում, ընտանիք և սեռական կյանք, հանգստի կազմակերպում:

Կոնտակտ ինֆորմացիա

Հասցե՝ Երևան 0002, Դեմիրճյան 36,
«Ունիսոն» ՀԿ
Հեռախոս՝ (37410) 522170
Ֆաքս՝ (37410) 226470
Վեբ-կայք՝ www.unison.am
էլ. փոստ՝ unison@unison.am

Սույն հրապարակումը իրականացվում է
Բաց Հասարակության
Ինստիտուտի և
Նիդեռլանդների Կառավարության
ֆինանսական միջոցներով

«Ունիսոն» ՀԿ ©2007 Unison NGO